**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՍԹԻՆԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/5**

ք.Երևան «13» «02» 2025թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Տիգրան Իգիթյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրենի ժ/պ Արման Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 28.03.2022թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/5 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 27.12.2024թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշումն ուժի մեջ մտնելու փաստը, ուժի մեջ է մտել 28.12.2024թ.-ին կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.2 Պայմանագրի 7.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով կողմերը սահմանում են, որ Պայմանագրի պայմանները կիրառվում են նաև 01.01.2025թ.-ից մինչև սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելը Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ»:

1.3 Պայմանագրով նախատեսված հոսթինգի ծառայությունների մատուցման գումարը՝ 2025 թվականի համար, կազմում է 288000 (երկու հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ, իսկ մեկ ամսվա համար՝ 24000 (քսանչորս հազար) ՀՀ դրամ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/5 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված են 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «ԷԿԵՆԳ» ՓԲԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ՀՀ, ք. Երևան,Տիգրան Մեծի 4 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 1570004596000700 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 02707093 |
| ՔԿ ծառայության գլխավոր քարտուղար Տ.Իգիթյան ________ (ստորագրություն) Կ.Տ | Տնօրենի ժ/պ Ա.Խաչատրյան ________ /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1
«13» «02» 2025 թ. կնքված N 3 Համաձայնագրի
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայություն | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72311120/1 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար հոսթինգի ծառայություններ | 24000 | 48000 | 72000 | 96000 | 120000 | 144000 | 168000 | 192000 | 216000 | 240000 | 264000 | 288000 | 288000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղար
Տ.Իգիթյան ---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան,Տիգրան Մեծի 4
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570004596000700
ՀՎՀՀ 02707093
Տնօրենի ժ/պ
Ա.Խաչատրյան
---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ